ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.08.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/78

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի՝

Մասնակցությամբ՝

«Խաչպար» ՍՊԸ-ի տնօրեն

Ս. Բալասանյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 264.110.05665)

ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ՝

Վ. Վահանյանի (լիազորագիր տրված՝ 15.01.2020թ.),

քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական գործիքների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.08.2020թ. ներկայացված և 20.08.2020թ. վարույթ ընդունված բողոքը (հետայսու՝ ԳԲՔԱ-ՆԳ-2020/78 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի հետևյալը.

1. «Խաչպար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Խաչպար» ՍՊԸ-ն (հետայսու՝ Ընկերություն) 19.08.2020թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ-ն բժշկական գործիքների, պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարություն է հրապարակել ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնանշման հարցման մասին, որը հաստատվել է գնահատող հանձնաժողովի 2020թ. օգոստոսի 12-ի թիվ 1.1 որոշմամբ՝ (կից փաստաթուղթ թիվ 1), որի Հրավերի թվով 76 չափաբաժիններով պահանջվում են տարբեր տեսակի բժշկական գործիքներ, պարագաներ և ծախսվող նյութեր (կից փաստաթուղթ թիվ 2):

Հրավերի ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ Հավելված թիվ 1-ի աղյուսակներից հետո Պատվիրատուի կողմից պահանջվող բոլոր ապրանքների համար սահմանված են մի քանի լրացուցիչ պահանջներ, որոնցից թիվ 1-ում առկա է՝

«1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» պահանջը (կից փաստաթուղթ թիվ 3, արված նշումները):

Այդ պահանջը խտրական է, քանի որ սահմանափակում է ԵԱՏՄ արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի, հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին (նշված երկրների արտադրողների կողմից ՀՀ ՊՆ-ի ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 մրցույթով պահանջվող ապրանքների համար ՀՀ Օրենսդրությամբ սահմանված նման պահանջ գոյություն չունի), դրանով իսկ արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի պահանջով սահմանված ցանկացած անձի՝ տվյալ դեպքում՝ «Խաչպար» ՍՊԸ-ի, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը:

Պատվիրատուի կողմից այդ պահանջը խտրական է հանդիսանում ԵԱՏՄ արտադրողների կողմից ՀՀ ՊՆ-ի ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 մրցույթով պահանջվող ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող «Խաչպար» ՍՊԸ-ի համար (քանի որ ՀՀ օրենսդրությամբ նման պահանջ սահմանված չէ),

դրանով իսկ անհիմն կերպով բարդացնում է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Պատվիրատուի կողմից վերոգրյալ պահանջի ներառումը հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը՝ հակասելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սկզբունքներին:

«Խաչպար» ՍՊԸ-ն՝ ղեկավարվելով Օրենքի թիվ 46 հոդվածի 1-ին մասով և 3-րդ մասի 1-ին կետով, բողոքարկում է Պատվիրատուի՝ ՀՀ ՊՆ-ի ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/53 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 2020թ. օգոստոսի 12-ի թիվ 1.1 որոշմամբ հաստատված՝ բժշկական գործիքների, պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/53 ծածկագրով գնանշման հարցման Հրավերի ընթացակարգը, և դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրում է Ձեզ՝ ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի թիվ 50 հոդվածի 7-րդ մասով՝

Ընդունելու որոշում, որը կպարտավորեցնի ՀՀ ՊՆ-ի ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովին՝ ընդունելու համապատասխան որոշում՝ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

5) բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները՝

Վերոգրյալ փաստերը, ներկայացված փաստաթղթերը ապացուցում են, որ ՀՀ ՊՆ-ի ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնանշման հարցման Հրավերի «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ – ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ» Հավելված թիվ 1-ի աղյուսակներից հետո (ձեռք բերվող բոլոր ապրանքների համար) Պատվիրատուի կողմից սահմանված՝ «1. Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» պահանջը՝

ա) խտրական է և արգելք է հանդիսանում «Խաչպար» ՍՊԸ-ի համար՝ իրականացնելու գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու իր օրենսդրական սկզբունքը, դրանով իսկ հակասելով ՀՀ «Գնումների մասին» Օրենքի 7-րդ հոդվածի սահմանումներին;

բ) անհիմն կերպով բարդացնում է «Խաչպար» ՍՊԸ-ի հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին՝ հակասելով Օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին;

գ) հանգեցնում է գնման գործընթացի ոչ միասնական կանոններով, ոչ մրցակցային, ինչպես նաև խտրական հիմունքներով կազմակերպմանը՝ հակասելով Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված սկզբունքներին»:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.08.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, մասնակցել է նիստին և պնդել է բողոքը, միաժամանակ հայտնել է, որ բողոքում տեղի է ունեցել վրիպակ պետք է նշվեր Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» պահանջը, որը ևս խտրական է, քանի որ սահմանափակում է Մալազիայի, Հնդկաստանի, Չինաստանի արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի, հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին՝ ավելացնելով, որ նշված պահանջը հակասում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված սկզբունքներին:

Տնօրենը միաժամանակ հայտնել է, որ Պատվիրատուն չի կարող հրավերով սահմանել մի փաստաթղթի պահանջ, որը տվյալ ապրանքների ներմուծման ժամանակ պետությունը չի պահանջում:

<u>2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 25.08.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2632-2020 գրությամբ, բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալ դիրքորոշումը.

«Ի պատասխան Ձեր 21.08.20թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/12544-2020 գրության՝ ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքը, հայտնում եմ հետևյալը.

«Խաչպար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքում նշված է, որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով հաստատված «Տեխնիկական բնութագիր-Գնման ժամանակացույց» (Հավելված N1) – աղյուսակից հետո սահմանված լրացուցիչ պայմանների 1-ին ենթակետով գնման ենթակա բոլոր չափաբաժինների համար սահմանվել է «1.Եվրամիության երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» պահանջը, որը սահմանափակում է ԵԱՏՄ արտադրողների ապրանքատեսակների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքը իրականացնող կազմակերպությունների, այդ թվում նաև «Խաչպար» ՍՊ ընկերության հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին:

Այնինչ նշված ենթակետով սահմանվել է «1.**<u>Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում</u>** և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» պահանջը:

Բացի այդ, հարկ եմ համարում նշել, որ վերը նշված երկրներում ապրանքների գրանցված լինելու պահանջը չի ենթադրում որևէ երկրում արտադրված ապրանքատեսակների սահմանափակում, քանի որ ցանկացած երկրի ցանկացած արտադրող ունի հնարավորություն իր կողմից արտադրված ապրանքատեսակը գրանցելու վերը նշված երկրներում, եթե այդ ապրանքատեսակն իր որակական չափանիշներով համապատասխանում է սահմանված նորմերին:

Հրավերով սահմանված պահանջը չի հակասում «Գնումների մասին» ՀՀ Օրենքի պահանջներին, ուստի որևէ կերպ չի կարող հակասել Օրենքի 3-րդ հոդվածին (*<u>Հոդված 3. Օրենքի նպատակը, սկզբունքները և գործողության ոլորտը</u>*):

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստարկները գտնում եմ, որ «Խաչպար» ՍՊ ընկերության կողմից ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնման ընթացակարգի վերաբերյալ ներկայացված բողոքն անհիմն է, բողոքում ներկայացված տեղեկատվությունը չի համապատասխանում իրականությանը և **«Խաչպար» ՍՊ ընկերության կողմից ներկայացված բողոքը ենթակա է մերժման**:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35 ծածկագրով գնման ընթացակարգով ձեռքբերման ենթակա ապրանքատեսակները հանդիսանում են բժշկական պարագաներ, որոնք պայմանավորված նոր COVID-19 համավարակով,

ներկայումս խիստ անհրաժեշտ են ՀՀ ՊՆ ռազմաբժշկական հաստատությունների բնականոն աշխատանքի կազմակերպման և զինծառայողների բժշկական օգնությունը պատշաճ մակարդակով ցուցաբերման համար: Նշվածով պայմանավորված՝ խնդրում եմ վերոհիշյալ բողոքը քննել և որոշումն ընդունել հնարավորին սեղմ ժամկետում»:

ՀՀ պաշտպանության նախարարությունը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 27.08.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով ի պատասխան Ընկերության այն պնդմանը, որ «**<u>Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում</u>** և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» պահանջը խտրական է և սահմանափակում է Մալազիայի, Հնդկաստանի, Չինաստանի արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքն իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի, հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին՝ հայտնել է, որ նման պահանջի սահմանումը պայմանավորված է որակյալ ապրանք ձեռքբերելու հետ և չի ենթադրում որևէ երկրում արտադրված ապրանքատեսակների սահմանափակում, քանի որ ցանկացած երկրի ցանկացած արտադրող ունի հնարավորություն իր կողմից արտադրված ապրանքատեսակը գրանցելու վերը նշված երկրներում, եթե այդ ապրանքատեսակն իր որակական չափանիշներով համապատասխանում է սահմանված նորմերին:

Միաժամանակ ի հավաստումն վերը նշվածի Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված այլ ընթացակարգերով որոշ ընկերությունների կողմից ներկայացված Չինաստանում, Հնդկաստանում արտադրված ապրանքների գրանցման հավաստագրեր:

<u>4. ԳԲՔԱ-ՆԳ-2020/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ԳԲՔԱ-ՆԳ-2020/78 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական գործիքների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

2. Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալը. «Ապրանքները պետք է ունենան «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)»:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Խաչպար» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը և բողոքի քննության նպատակով 27.08.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի ընթացքում կատարված բողոքի լրացումը, ՀՀ պաշտպանության նախարարության 25.08.2020թ. թիվ ՊՆ/Պն/02/2632-2020 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35» ծածկագրով ընթացակարգի հրավերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

4) ներառում են գնման առարկայի մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը:

3. ***Ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:***

4. Գնման առարկայի հատկանիշները կարող են սահմանվել նաև որպես կատարողականի կամ գործառութային (ֆունկցիոնալ) նկարագրեր, որոնք պետք է ներկայացվեն բավարար ճշտությամբ՝ հնարավորություն տալով մասնակիցներին և պատվիրատուին ճշգրիտ ընկալել պայմանագրի առարկան:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 22-րդ կետի համաձայն՝ ***գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ և արտադրողներ՝***

<u>բացառությամբ օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված պայմաններով գնում կատարելու դեպքերի:</u>

Այսպիսով՝ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական գործիքների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ-ԳՀԱՊՁԲ-20-9/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, սահմանվել է հետևյալը. «Ապրանքները պետք է ունենան «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)»:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Խաչպար» ՍՊԸ-ն բողոքով պնդել է, որ Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/ կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագիր (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» հրավերով սահմանված պահանջը խտրական է, քանի որ սահմանափակում է Մալազիայի, Հնդկաստանի, Չինաստանի արտադրողների ապրանքների ներմուծմամբ և ՀՀ տարածքում դրանց վաճառքն իրականացնող կազմակերպությունների, այդ թվում՝ նաև «Խաչպար» ՍՊԸ-ի, հնարավոր մասնակցությունը տվյալ մրցույթին:

Ի պատասխան Ընկերության պնդմանը՝ Պատվիրատուն հայտնել է, որ նման պահանջի սահմանումը պայմանավորված է որակյալ ապրանք ձեռքբերելու հետ և չի ենթադրում որևէ երկրում արտադրված ապրանքատեսակների սահմանափակում, քանի որ ցանկացած երկրի ցանկացած արտադրող ունի հնարավորություն իր կողմից արտադրված ապրանքատեսակը գրանցելու վերը նշված երկրներում, եթե այդ ապրանքատեսակն իր որակական չափանիշներով համապատասխանում է սահմանված նորմերին:

Միաժամանակ ի հավաստումն վերը նշվածի Պատվիրատուն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված այլ ընթացակարգերով որոշ ընկերությունների կողմից ներկայացված Չինաստանում և Հնդկաստանում արտադրված ապրանքների գրանցման հավաստագրեր:

Այս տեսանկյունից արձանագրում եմ, հետևյալը.

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գնման նպատակն է պատվիրատուի հատուցմամբ վերջինիս կարիքների համար կոնկրետ ապրանքի, աշխատանքի կամ ծառայության ձեռքբերումը, ուստի Օրենքի 13-րդ հոդվածով սահմանվել են պարտադիր պահանջներ ուղղված Ընթացակարգի հրավերով նախատեսված գնման առարկայի տեխնիկական բնութագրի սահմանմանը: Մասնավորապես՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը: Դրա հետ մեկտեղ՝ ելնելով գնման առարկայի առանձնահատկությունից՝ դրանց հատկանիշները հնարավորինս ներառում են ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության որակին, ստանդարտին, անվտանգությանը, պայմանական նշաններին, տերմինաբանությանը, փաթեթավորմանը, բեռնաթափմանը, չափին, նախագծերին, ինչպես նաև գնման առարկայի այլ հատկանիշներին վերաբերող պայմանների հստակ նկարագրությունը՝ հիմնված միջազգային ստանդարտների և Հայաստանի Հանրապետությունում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի, ստանդարտների, իսկ դրանց բացակայության դեպքում՝ ժամանակավոր տեխնիկական պայմանների վրա:

Ընդ որում՝ գնումների և գնումների գործընթացի իրականացման կարևորագույն սկզբունքներից է հանդիսանում գնման արդյունավետ և օգտավետ իրականացումը, հետևաբար պատվիրատուի կողմից իրականացվող գնումը պետք է լիարժեք համապատասխանի վերջինիս գնման պահանջին և ապահովվի պատվիրատուի այն կարիքի բավարարումը, որի նպատակով կազմակերպվել է նշված գնումը և միևնույն ժամանակ չհակասի Օրենքի 13-րդ հոդվածների պահանջներին:

Այսպիսով՝ ուսումնասիրելով գործի քննությամբ ներկայացված փաստարկները, գտնում եմ, որ «Եվրամիության և/կամ ԵԱՏՄ երկրներից որևէ մեկում և/կամ ԱՄՆ-ում և/կամ Ճապոնիայում ապրանքների գրանցման հավաստագրի առկայության (բացառություն են կազմում ՀՀ-ում արտադրված ապրանքները)» Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջը չի կարող դիտարկվել որպես խտրական, քանի որ Պատվիրատուի կողմից,

թույլ չի տրվել «Գնումների մասին» ՀՀ օրենքով վկայակոչված տեխնիկական բնութագրի մասով և ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 22-րդ կետով սահմանված պահանջների խախտումներ:

Վերոգրյալով պայմանավորված, գտնում եմ, որ Ընկերության բողոքը հիմնավոր չէ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Խաչպար» ՍՊԸ-ի կողմից 19.08.2020թ. ներկայացված բողոքը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**